# ՆԿԱՐԱԳԻՐ

**առաջարկվող ապրանքի ամբողջական**

ՕԱԶԻՍ ԿՈՄՊՅՈՒՏԵՐ ՍՊԸ-ն ԵԱ-ԷԱՃԱՊՁԲ-26/39 ծածկագրով կազմակերպված էլեկտրոնային աճուրդին մասնակցելու շրջանակում ներկայացնում է իր կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը

| Չափաբաժնի համար | Առաջարկվող ապրանքի | | | | |
|---|---|---|---|---|---|
| | ֆիրմային անվանումը | ապրանքային նշանը | մակնիշը | արտադրողի անվանումը | տեխնիկական բնութագիրը |
| 1 | Grandstream | Grandstream | Grandstreamm | Grandstream | Ներքին և արտաքին հեռախոսային հաղորդակցության ապահովման համար նախատեսված միասնական IP հեռախոսակապի համակարգ, որը պետք է ներառի IP հեռախոսներ, DECT անլար հեռախոսակապի ենթահամակարգ, աշխատանքային կայան, տվյալների պահպանման միջոցներ, ինչպես նաև համակարգի լիարժեք աշխատանքի համար անհրաժեշտ բոլոր օժանդակ նյութերը և ծառայությունները: Համակարգը պետք է ապահովի ներքին բաժանորդների միջև անխափան կապ, արտաքին |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | | | հեռախոսային ցանցերի հետ ինտեգրում, զանգերի կենտրոնացված կառավարում, զանգերի ձայնագրում, ձայնային հաղորդագրությունների պահպանում, աշխատակիցների շարժական կապ և համակարգի կենտրոնացված կառավարում մեկ միասնական միջավայրից: 1. ՍՏԱՆԴԱՐՏ IP ՀԵՌԱԽՈՍՆԵՐ Համակարգը պետք է ներառի 28 (քսանութ) հատ IP հեռախոս: Յուրաքանչյուր սարքը պետք է ապահովի. առնվազն 2 SIP հաշիվ, առնվազն 2 հեռախոսային գիծ, HD Voice (Բարձր հստակության ձայն), լիարժեք երկկողմանի բարձրախոսային կապ (Full Duplex Speakerphone), արձագանքի վերացում (Echo Cancellation) և աղմուկի նվազեցում (Noise Reduction) տեխնոլոգիաներով ապահովված բարձրորակ ձայնային հաղորդակցություն, 2 Ethernet պորտ, PoE սնուցման աջակցություն, հեռախոսագիրք՝ առնվազն 2000 գրառում, զանգերի պահում, զանգերի փոխանցում, վերահասցեավորում, եռակողմ |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | | | կոնֆերանս կապ և Web Configuration Interface: 2. ՂԵԿԱՎԱՐԱԿԱՆ / ՕՊԵՐԱՏՈՐԱԿԱՆ IP ՀԵՌԱԽՈՍՆԵՐ Համակարգը պետք է ներառի 3 (երեք) հատ բարձրակարգ IP հեռախոս: Յուրաքանչյուր սարքը պետք է ապահովի. առնվազն 6 SIP հաշիվ, առնվազն 6 գիծ, գունավոր LCD էկրան` ոչ պակաս, քան 4.3", Bluetooth, Gigabit Ethernet պորտեր, PoE սնուցում, առնվազն 24 ծրագրավորվող ստեղներ, HD Audio, 5 և ավելի մասնակիցների կոնֆերանս կապ, BLF ֆունկցիա և Headset աջակցություն: 3. DECT ԱՆԼԱՐ ՀԵՌԱԽՈՍԱԿԱՊԻ ՀԱՄԱԿԱՐԳ DECT Բազային Կայան - Քանակ` 2 հատ: Յուրաքանչյուր բազային կայան պետք է ապահովի. մինչև 20 SIP հաշիվ, մինչև 20 հեռախոսային գիծ, HD Voice (Բարձր հստակության ձայն), լիարժեք երկկողմանի բարձրախոսային կապ (Full Duplex Speakerphone), DECT Encryption (DECT կոդավորված (գաղտնագրված) կապ), TR-069 հեռավար կառավարման և կարգաբերման աջակցություն, Ավտոմատ կարգաբերում (Auto |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | | | Provisioning), Push-to-Talk (PTT) գործառույթի աջակցություն, Սպասող հաղորդագրության ցուցիչ (Message Waiting Indicator), Զանգի փոխանցում (Call Transfer), Զանգերի վերահասցեավորում (Call Forward), «Չանհանգստացնել» (Do Not Disturb) ռեժիմ, Եռակողմ կոնֆերանսային կապ (3-Way Conference)։ DECT Անլար Հեռախոսս - Քանակ՝ 6 հատ։ Յուրաքանչյուր սարքը պետք է ապահովի. DECT տեխնոլոգիա, գունավոր TFT էկրան, առնվազն 1.8" էկրան, HD Audio, Full Duplex Speakerphone, մինչև 400 մ կապ բաց տարածքում, մինչև 50 մ կապ փակ տարածքում, առնվազն 50 ժամ խոսակցության ռեժիմ, առնվազն 500 ժամ սպասման ռեժիմ, 20 SIP հաշիվների աջակցություն, 20 գծերի աջակցություն, DECT կոդավորված կապ։ 4. ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԿԱՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻՉ Համակարգը պետք է ներառի 1 (մեկ) հատ աշխատանքային համակարգիչ, որը նախատեսված կլինի IP հեռախոսակապի համակարգի կառավարման, մոնիթորինգի, |

# ПОЛНОЕ ОПИСАНИЕ

**предлагаемого товара**

Оазис Компютер ООО в качестве участника в рамках участия в электронном аукционе под кодом ԵԱ-ԷԱՃԱՊՁԲ-26/39 ниже представляет полное описание предлагаемого им товара.

| Номер лота | Предлагаемый товар | | | | |
|---|---|---|---|---|---|
| | фирменное наименование | товарный знак | марка | наименование производителя | технические характеристики |
| 1 | | | | | հաշվետվությունների ձևավորման և օպերատորական աշխատանքների համար: Համակարգիչը պետք է ապահովի. Intel Core i5 12-րդ սերնդի կամ ավելի բարձր դասի պրոցեսոր, առնվազն 10 միջուկ, առնվազն 16 ԳԲ DDR4 կամ DDR5 օպերատիվ հիշողություն, առնվազն 512 ԳԲ NVMe SSD, Gigabit Ethernet ցանցային քարտ, HDMI և/կամ DisplayPort տեսաելքեր, USB 3.0 և ավելի բարձր ստանդարտի պորտեր, ստեղնաշար, մկնիկ և մոնիտոր: 5. ՏՎՅԱԼՆԵՐԻ ՊԱՀՊԱՆՄԱՆ ՄԻՋՈՑ Քանակ` 1 հատ: Արտաքին կոշտ սկավառակ. տարողություն` առնվազն 1 ՏԲ, USB 3.0 կամ ավելի բարձր ինտերֆեյս, նախատեսված զանգերի ձայնագրությունների և պահուստային պատճենների պահպանման համար: 6. ՄԱԼՈՒԽԱՅԻՆ ԵՎ ՄՈՆՏԱԺԱՅԻՆ ՆՅՈՒԹԵՐ Մատակարարը պարտավոր է տրամադրել համակարգի լիարժեք աշխատանքի համար անհրաժեշտ բոլոր նյութերը` ներառյալ. UTP մալուխներ, Patch Cord-եր, RJ-45 միակցիչներ, մալուխատարներ, վարդակներ, |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | | | ամրակներ, սնուցման պարագաներ, մոնտաժային նյութեր։ 7. ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ Մատակարարը պարտավոր է իրականացնել սարքավորումների մատակարարում, տեղադրում, համակարգի ծրագրավորում, համարակալման պլանի ստեղծում, SIP օպերատորի ինտեգրում, զանգերի ձայնագրման կարգավորում, համակարգի ամբողջական փորձարկում, շահագործման հանձնում, պատասխանատու աշխատակիցների ուսուցում, տեխնիկական փաստաթղթերի տրամադրում։ Բոլոր սարքավորումները պետք է լինեն նոր, չօգտագործված, գործարանային փաթեթավորմամբ, համապատասխանեն CE, FCC, RoHS կամ համարժեք միջազգային ստանդարտներին և ունենան առնվազն 12 ամսվա երաշխիք։ Համակարգը պետք է հանձնվի ամբողջությամբ աշխատունակ վիճակում՝ որպես միասնական և կենտրոնացված կառավարվող IP հեռախոսակապի համակարգ։ |